ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, վերականգնման, տարածքի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ***ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/02*** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2018 թվականի ապրիլի 4-ին** կնքված N ***«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/02-2»*** ծածկագրով պայմանագրում **2018 թվականի նոյեմբերի 30-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Պայմանագրով նախատեսված՝ ՀՀ Շիրակի մարզի Հոռոմ համայնքի Սբ Հռիփսիմե եկեղեցու ամրակայման, նորոգման և վերականգնման կատարվելիք աշխատանքների իրականացման ընթացքում բացահայտվել են Հուշարձանում առկա մի շարք խնդիրներ, մասնավորապես հուշարձանի վերականգնման աշխատանքների ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված առանձին աշխատանքների ծավալների պակասեցում և առանձին աշխատանքների ծավալների ավելացում, ինչի հետ կապված հեղինակային հսկողություն իրականացնող «ԱՆԻՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի հեղինակային հսկիչ, վերականգնման նախագծի հեղինակի կողմից՝ կատարված ուսումնասիրության հիման վրա կազմվել է համապատասխան մասնագիտական ակտ, որը համատեղ ուսումնասիրվել է Կապալառուի, ՀՀ մշակույթի նախարարության «Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման գործակալության», Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման, տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից տրվել դրական մասնագիտական եզրակացություն:

Փոփոխության նկարագրություն N 1: Պայմանագրի N 1 «Ծավալաթերթ-նախահաշիվ» հավելվածով նախատեսված իրականացվելիք որոշ տեսակների աշխատանքների ծավալների փոփոխություն՝ պակասեցում և ավելացում, ինչպես նաև պայմանագրի գնի նվազեցում:

Փոփոխության հիմնավորում N 1: Հուշարձանի վերականգնման իրականացման ընթացքում բացահայտված իրական խնդիրների լուծման անհրաժեշտություն և համապատասխան մասնագիտական դրական եզրակացության առկայություն:

Փոփոխությունները համապատասխանում են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերի պահանջներին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ն. Կարապետյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N3

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/02-2» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «30» 11 2018 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շինարար-97» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Ահարոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (yunrhbm' Կապալառու), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2018 թվականի ապրիլի 4-ին կնքված ՀՀ Շիրակի մարզի Հոռոմ համայնքի Սբ Հռիփսիմե եկեղեցու ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների պետական գնման N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/02-2» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը ինչպես նաև համապատասխան համադրում կատարելու վերաբերյալ մասնագիտական եզրակացությունը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերով՝ Պատվիրատուն և Կապալառուն համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Պայմանագրի 5.1. կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 13 479 646 (տասներեք միլիոն չորս հարյուր յոթանասունինը հազար վեց հարյուր քառասունվեց) ՀՀ դրամ, որից 2 246 608 (երկու միլիոն երկու հարյուր քառասունվեց հազար վեց հարյուր ութ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:»:

1.1.2 Պայմանագրի թիվ 1՝ «Ծավալաթերթ-նախահաշիվ» հավելվածը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:

1.1.3 Պայմանագրի թիվ 3՝ «Վճարման ժամանակացույց» հավելվածը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը և հավելվածները կազմված են 5 (հինգ) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ մշակույթի նախարարություն	«Շինարար -97» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	Հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Տեքստիլագործների 29136
Կառավարական շենք N 2,	էլ.հասցե՝ hovhannes.aharonyan@gmail.com
հեռ.՝ (011) 58-51-78	հեռ.՝ 093030366
ՀՎՀՀ 02508054,հ/հ 900011018919	ՀՎՀՀ 05510886,
ՀՀ ֆինանսների նախարարության	~05012200981
աշխատակազմի գործառնական վարչությունում	«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ, Գյումրու Մ/Ճ
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Ա. Մուրադյան	Հ. Ահարոնյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1

«30» 11 2018թ. կնքված N 3 համաձայնագրի

Հավելված թիվ 1

« 04 » 04 2018 թ. կնքված

«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/02-2» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[1]*

ՀՀ Շիրակի մարզ Հոռոմ գյուղի Սբ Հռիփսիմե եկեղեցու ամրակայման, նորոգման և վերականգնման իրականացվելիք աշխատանքների					
N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավ. գինը (հազար դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	2	3	4	5	6
	Ա-Նախապատրաստական աշխատանքներ				
2'	Եկեղեցու շուրջ կուտակված և առանձին քարերի և բեկորների դասակարգված հեռացում և կուտակում ձեռքի գործիքներով մինչև 70 մ հեռավորությամբ	մ³	26,50	6,73	178,44
3'	Տարածքում աղբի, կուտակված հավաքածուների և շին աղբի, թափոնների մաքրում հեռացում ձեռքի գործիքներով 7,8մ³	տ	14,04	0,96	13,42
	Նույնի բարձում բեռնատար մեքենաները և տեղափոխում 3 կմ		14,04	1,69	23,70
3'	Վթարային թեքված պատերի վրա կիսագերաններով հենարանների իրականացում արտաքինից . (9 hum)	մ³	18,0	40,43	727,73
3"	Նույնի ապամոնտաժում	մ³	18,0	12,56	226,06
5.	Մետաղական խողովակներից ինվենտարային ներքին տախտակամածի կապում և քանդում մինչև 4մ բարձ. (2 անգամ)	մ²	92,0	2,04	187,70
6	Մետաղական խողովակներից արտաքին և ներքին շարժական տախտակամածի կամրջակների կապում 1մ լայնք 45 բարձր. (2 հատ)	մ²	48,00	1,39	66,88
	Բ-Հողային աշխատանքներ				
1	Հիմքերի հատվածաբար փորում միջինը 1.5 մ լայն	մ³	105,123	3,39	356,48
2	Հիմնատակի բուտաբետոնի իրականացում	մ³	19,508	61,63	1202,28
3	Հիմքերի ամրակայում B20 դասի բետոնով	մ³	68,5625	107,84	7393,60
4	Ամրան A I դասի	տ	0,064	560,66	35,96
8	Ø 3 բազալտե ամրան 90011	մ	661,1	0,52	345,75
9	Հողի հետլիցք և տոփանում	մ³	31,5	1,28	40,31
	Գ-Հուշարձանի ամրակայում				
	Վթարային և ընկնող տեղաշարժված բեկորների քանդում իջեցում համարակալումով 27,9մ³	մ²	69,75	11,39	794,21
1"	Նույնի տեղափոխում 20մ հեռավորության վրա և	մ²	69,75	11,82	824,31

[1] *Ծավալաթերթ-նախահաշիվը հրապարակվում է ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքների:*

	դասակարգում				
3	Պատերի բացվածքների ներարկում հատուկ բաղադրակազմի բարդ կրաշաղախով	լ	1933,2	2,00	3869,09
4	Պատերի ներքին մակերևութների շաղափում 600մմ քայլով 800 խոր	հատ	1000	1,91	1905,22
5	Նույն ամրանների տեղադրում հատուկ բաղադրության սոսնձակազմով	մ³	1,50	66,95	100,42
5"	Եկեղեցու արտաքին պատերի պարագծային գոտեկապի իրականացում 100մմ լայնությամբ-74մ	տ	0,676	1040,46	703,35
6"	Հավաքված շին աղրի բարձում և տեղափոխում ձեռքի գործիքներով բեռնատար մեքենա 3կմ հեռավորությամբ-12,6մ³	տ	179,28	2,40	430,25
12*	Եկեղեցու ներքին պատերից կրաավազային սվաղի մաքրում ձեռքի գործիքներով	մ²	489,65	1,45	709,45
					20 134.6

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Շիրակի մարզի Հոռոմ գյուղի Սբ Հռիփսիմե եկեղեցու տարածքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,հ/հ 900011018919
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

Գլխավոր քարտուղար՝

_____ **Ս. Մուրադյան**
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինարար -97» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Տեքստիլագործների 29/36
էլ.հասցե՝ hovhannes.aharonyan@gmail.com
հեռ.՝ 093030366
ՀՎՀՀ 05510886,
հ/հ 205012200981
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ, Գյումրու Մ/Ճ

Տնօրեն՝

_____ **Հ. Ահարոնյան**
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2

«30» 11 2018թ. կնքված N 3 համաձայնագրի

Հավելված թիվ 3

« 04 » 04 2018 թ. կնքված
«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/02-2» *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	45451600/9	ՀՀ Շիրակի մարզի Հոռոմ համայնքի Սբ Հռիփսիմե եկեղեցու ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքներ	0	0	0	9633000	19266600	30000000	54009300	78554600	103374000	118556000	133338000	13479646	13479646

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,հ/հ 900011018919
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

Գլխավոր քարտուղար՝

Ս. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինարար -97» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Տեքստիլագործների 29/36
էլ.հասցե՝ hovhannes.aharonyan@gmail.com
հեռ.՝ 093030366
ՀՎՀՀ 05510886,
հ/հ 20501220098 1
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ, Գյումրու Մ/Ճ

Տնօրեն՝

Հ. Ահարոնյան
(ստորագրություն)

Կ.Տ